1 նոյեմբերի, 2022 թ.

Հետազոտություններին, ուսումնասիրություններին (Հ/ՈՒ) կամ ոլորտային քաղաքականության հարցերի վերլուծություններին վերաբերող օրինակելի կանոններ

1. Եթե ԵՀՀ-ն ստանում է հետազոտություն կամ ուսումնասիրություն (Հ/ՈՒ) իրականացնելու հայտ, այն պետք է բովանդակի հետևյալը.

ա. Ինչո՞վ է պայմանավորված առաջարկվող Հ/ՈՒ-ն իրականացնելու անհրաժեշտությունը.

բ. Ի՞նչ հիպոթեզ/վարկած է ընկած ներկայացվող առաջարկի հիմքում:

գ. Ո՞վ է նախկինում կատարել նման ուսումնասիրություններ Հայաստանում և/կամ այլուր (համատեքստ):

դ. Ինչո՞ւ են այդ մարդիկ ընտրվել Հ/ՈՒ-ն իրականացնելու համար:

ե. Ո՞րն է առաջարկվող մեթոդաբանությունը (եղած նյութերի վերլուծություն, խորքային հարցազրույցներ. եթե այո, ապա ի՞նչ կարգի՝ քանակական վերլուծություն, վերլուծության մեթոդ և այլն):

զ. Ընդհանուր առմամբ քանի՞ հոգի է ներգրավվելու աշխատանքում (ներառյալ հարցազրուցավարները):

է Որքա՞ն ժամանակ կպահանջվի նյութերը հավաքելու, վերլուծելու և եզրակացություններ ու առաջարկներ բովանդակող առաջին զեկույցը ներկայացնելու համար:

Այլ կանոններ.

2. Խնդրում ենք խուսափել հետազոտության կամ ուսումնասիրության փոխարեն «հարցում» եզրույթի օգտագործումից. բացառություն կարող են կազմել այն լայնածավալ քանակական հետազոտությունները, որոնք արվում են ներկայացուցչական ընտրանքի սկզբունքով և մի քանի տասնյակ կամ ավելի մասնակիցներ ներգրավող հարցազրույցներ են պարունակելու:
3. Վերը նշվածի պարագայում ընտրված մեթոդաբանությունը պետք է հստակ բացատրի ներկայացուցչական ընտրանքի սկզբունքները: Մնացած բոլոր Հ/ՈՒ-ները կգնահատվեն որպես որակական կամ խառը բնույթի հետազոտություններ:
4. Վերոնշյալը գնահատելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.
   - ա. 15 էջ ծավալով լուրջ, բարձրորակ, նոր տեղեկություններ և նոր եզրակացություններ բովանդակող զեկույցին նախորդող Հ/ՈՒ-ն իրականացնելու համար պահանջվում է մոտ վեց ամիս, իսկ 30 էջ ծավալի դեպքում՝ մոտ մեկ տարի:
   - բ. Յուրաքանչյուր նման Հ/ՈՒ պետք է բաղկացած լինի.
     - i. Ամփոփ նկարագրից
     - ii. Ներածությունից
     - iii. Վերլուծությունից
     - iv. Եզրակացություններից և առաջարկներից

v. Գրականության ցանկից
vi. Հավելվածից, այն է՝ մեթոդաբանություն, հարցազրույցներ, որտեղ և ինչպես են դրանք պահվում:

գ. Հետազոտության ընդհանուր ծավալի ամենամեծ մասը պետք է կազմի հիմնական՝ վերլուծական բաժինը: Ներածությունը, եզրակացությունն ու առաջարկությունները պետք է լինեն ավելի փոքրածավալ, քան հիմնական բաժինը. մեթոդաբանությունը և հավաքված նյութը բովանդակող հավելվածները (հարցազրույցներ և այլն) ծավալի սահմանափակում չունեն, սակայն պետք է պատշաճ ձևով համարակալված լինեն հիմնական տեքստում:

դ. Նախագծին վերաբերող հաշվետվության մեջ պետք է նշվի նաև, թե ինչպես է օգտագործվելու ուսումնասիրությունը, ում է այն հասցեագրվելու, ինչպես է տարածվելու և այլն:

ե. Բացի հետազոտության տեքստից, անհրաժեշտ է ներկայացնել զեկույց Power Point ձևաչափով, որը պետք է ամփոփի Հ/ՈՒ-ն և ներկայացնի հետևյալը. վերնագիր/ներածություն (սլայդ 0). պահանջարկ և հիպոթեզ (սլայդ 1). վերլուծություն (սլայդներ 2-ից N). եզրակացություններ և առաջարկություններ (սլայդներ 2 + N + առավելագույնը 3). մեթոդաբանություն և հավելվածների ցանկ (սլայդներ (2 + N + 3) + 3 առավելագույնը): Զեկույցի՝ այլ ձևաչափով ներկայացված արդյունքները ենթակա չեն ընդունման: Հետազոտողները կարող են մինչև զեկույցը պատրաստելը քննարկել այս չափսերը ԵՀՀ-ի պատասխանատու անձանց հետ: Թվերը պայմանական են, սակայն հիշեք, որ կես ժամից ավելի ելույթը մարդիկ դժվարությամբ են ընկալում: PTT ձևաչափով զեկույցի այլ առանձնահատկությունները (դիզայն և այլն) կարող են որոշվել, օգտագործելով «Հրատարակչական գործընթացի ուղեցույց»-ի «Դիզայն» ենթաբաժինը: Հիշեք, որ հոծ տեքստերը PTT ձևաչափին հակացուցված են:

զ. Հետազոտության տեքստի՝ԵՀՀ-ին ներկայացվող առաջին իսկ («սևագիր») տարբերակը պետք է ընդգրկի վերը նշված i-vi կետերը և ձևակերպված լինի «Հրատարակչական գործընթացի ուղեցույց»-ի առաջին բաժնում նշված պահանջների: Որևէ բացառություն չի արվում:

է. Վերլուծություն, առաջարկություններ և եզրակացություններ չբովանդակող և միայն հարցազրույցներից ու մեթոդաբանությունից բաղկացած որևէ տեքստ ընդունման ենթակա չէ:

ը. Առաջարկությունները չպիտի մեծ թիվ կազմեն. 15-30 էջ ծավալով Հ/ՈՒ-ների պարագայում դրանք պիտի լինեն 10 կետից ոչ ավելի, հստակ ձևով շարադրված և խմբավորված՝ ըստ հասցեատերերի: Դրանք պիտի ցույց տան, թե ո՞վ է իրականացնելու աշխատանքը, ինչու՞ է այն հնարավոր իրականացնել, ինչո՞վ է պայմանավորված տվյալ գործունեության կարևորությունը և ինչ ժամկետներում այն կարող է իրականացվել: Առաջարկները պիտի ձևակերպվեն հնարավորինս հստակ ձևով և ընդգրկեն նախատեսվող գործողությունների հերթականության մասին տեղեկություն: Առաջարկները չպիտի լինեն չափազանց ընդհանուր, անբովանդակ և «երազանքային»:

Օրինակ. «Դատավորները պիտի հետևեն էթիկայի կանոններին» արտահայտությունը ՉԻ ԿԱՐՈՂ դիտարկվել որպես առաջարկություն։ «Բարձրագույն դատական խորհուրդը պիտի 1 տարվա ընթացքում կազմակերպի էթիկայի կանոններին վերաբերող 5 մեկօրյա դասընթաց 150 դատավորի համար. դասընթացները պիտի անցկացնեն բարձրորակ դասընթացավարները (որտեղի՞ց - լրացնել)». այս օրինակը ԿԱՐՈՂ Է դիտարկվել որպես առաջարկություն։

5. Այս պահանջները պիտի հստակ ձևով ամրագրվեն Հ/ՈՒ-ին վերաբերող ցանկացած պայմանագրում, և եթե դրանք չկատարվեն, պայմանագիրը չպիտի շարունակվի:
6. Ոլորտային քաղաքականության որևէ հարցի վերաբերյալ վերլուծությանը վերաբերող աշխատանքը տարբերվում է հետազոտությունից և ուսումնասիրությունից նրանով, որ նման տեքստում կարելի է բաց թողնել հղումները հետազոտական նյութերին (հարցազրույցներ և այլն), եթե դրանք մատչելի չեն: Մնացած բոլոր առումներով տեքստը պիտի ունենա նույն կառուցվածքը, և պայմանագրում պիտի հստակ նշվեն բոլոր պահանջները։
7. Որոշ հետազոտությունների համար կարող են պահանջվել լրացուցիչ՝ էթիկական բնույթի տեղեկություններ (օրինակ, եթե անհրաժեշտ է ապահովել անանունությունը, հարցազրույց անցկացնել երեխաների հետ և այլն): Նման դեպքերում հայտատուները պիտի տեղեկացնեն ԵՀՀ-ին (իսկ ԵՀՀ-ն կարող է իր հերթին դիմել ՀՌԿԿ-ին կամ «Սոցիես»-ին խորհրդատվության նպատակով)՝ պարզելու, թե ինչպես մշակել էթիկայի պահանջները և բավարարել դրանք նախքան ռիսկային հետազոտություն իրականացնելը:
8. Ցանկացած հետազոտություն և այդ հետազոտության բոլոր նյութերը համարվում են ԵՀՀ-ի, դրամաշնորհատուի և հեղինակների համասեփականությունը: ԵՀՀ-ն կպարզի դրամաշնորհատուից հեղինակային իրավունքին վերաբերող պահանջները: Եթե դրամաշնորհատուն պետական գործակալություն է, սովորաբար դա Creative Commons կամ այլ նման անվճար հեղինակային իրավունքն է:
9. ԵՀՀ-ի համար Հ/ՈՒ իրականացնողները չպիտի ներկայացնեն այն արդեն տպագրության համար նախատեսված ձևաչափով (էջադրված, դիզայնն արված և այլն): ԵՀՀ-ն է որոշում, տպել այն, թե ոչ, և եթե տպել, ապա երբ և ինչպես (օրինակ՝ օգտագործել «ԵՀՀ Համալսարան» դիզայնը, թե ոչ և այլն):
10. Պայմանագրին կցվող գործողությունների ծրագրում հայտատուն և ԵՀՀ-ն պիտի հստակեցնեն նաև «կույր» գրախոսողների, խմբագիրների, սրբագրողների հարցը՝ ով և ինչի համար է պատասխանատու: Հ/ՈՒ-ին վերաբերող պայմանագիր կնքելիս ԵՀՀ-ն միշտ պիտի ունենա հավելյալ բյուջե և մասնագետների ցանկ, որպեսզի կարողանա աջակցել հայտատուներին այդ գործառույթների իրականացման հարցում:
11. Հայտատուն պիտի կազմակերպի իր աշխատանքն այնպես, որ մինչև ծրագրի ավարտը բավարար ժամանակ մնա փաստաթուղթը խմբագրելու համար: Դա նշանակում է, որ ԵՀՀ-ն պիտի ունենա առնվազն մեկ ամիս 30 էջանոց հետազոտությունը քննելու և պարզելու համար, արդյոք այն համապատասխանում է պահանջներին, թե ոչ: Հետագա գործողությունները կարող են որոշվել միայն դրանից

հետո: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ 30 էջանոց հետազոտության նախնական տարբերակը ներկայացնելու և այն հրատարակելու միջև ընկած ժամանակահատվածը տևում է մոտավորապես 4 ամիս:

12. ԵՀՀ-ի կողմից Հ/ՈՒ-ների վերահսկումը պիտի իրականացնեն առնվազն մագիստրոսի աստիճան (ցանկալի է օտարերկրյա համալսարանից) կամ ԵՀՀ-ում առնվազն երկու տարվա շարունակական աշխատանքային փորձ ունեցող անձինք: Եթե տվյալ անձինք համարեն, որ իրենց գիտելիքը բավարար չէ այդ աշխատանքը կատարելու համար, խնդրում ենք նրանց ժամանակին դիմել իրենց ղեկավարին և/կամ համապատասխան գործընկերոջն այդ հարցում իրենց օգնելու խնդրանքով:
13. Ակնհայտ է, որ պայմանագրերը պիտի ընդգրկեն նաև գրագողությանը վերաբերող հավելվածը:
14. Այս կանոնները կարող են և պիտի ամբողջությամբ հանրայնացվեն, որպեսզի հայտատուները կարողանան ծանոթանալ դրանց հետ մինչև իրենց հայտերը ներկայացնելը: Դրանք, ինչպես նաև «Հրատարակչական գործընթացի ուղեցույց»-ը, պիտի ուղարկվեն նաև այն հայտատուներին, որոնց՝ Հ/ՈՒ իրականացնելու նպատակով ներկայացված հայեցակարգը արդեն հաստատվել է, եթե նախօրոք չեն ուղարկվել: ԵՀՀ-ի անձնակազմի կողմից դրսևորված թերացումները կարող են հանգեցնել մրցույթի որակազրկմանը և ծրագրի իրականացման հետաձգմանը: Եթե նախագիծը պարունակում է Հ/ՈՒ որպես գործողություններից մեկը, այս կանոնները պիտի ամենայն մանրամասնությամբ բացատրվեն հայտատուներին և հիշեցվեն ծրագրի հաստատման և իրականացման ընթացքում տեղի ունեցող քննարկումների յուրաքանչյուր հիմնական փուլում, դրամաշնորհառուների կարողությունների զարգացման նիստերի ընթացքում և հետայդու: Հայտատուներին պիտի պարբերաբար հիշեցվեն նաև գրագողությանը և «Հրատարակչական գործընթացի ուղեցույց»-ին վերաբերող դրույթները:

Հավելյալ նյութեր

Գրիգորյան, Ա. (2022) *Քաղաքականության փաստաթղթի մշակման ուղեցույց, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ.* Երևան: Հասանելի է այստեղ. https://epfarmenia.am/sites/default/files/Document/EPF_Policy_Paper_Guide_Grigoryan.pdf.

Տեր-Գաբրիելյան, Գ., Գրիգորյան, Ա., Պասկևիչյան, Ն. (2022) *Հրատարակչական գործընթացի ուղեցույց, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ.* Երևան: Հասանելի է այստեղ. https://epfarmenia.am/sites/default/files/Document/EPF_Publishing_Algorithm_2022_0.pdf.